

ՆՈՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

1944 թ. ինստիտուտի կառուցվածքում տեղի ունեցած փոփոխության արդյունքում Պատմության բաժինը տրոհվել է Հին ու միջին դարերի և Նոր դարի բաժինների: Նորաստեղծ բաժնի առաջին վարիչը Վահան Ռշտունին էր (1943–1948), այնուհետև բաժնի վարիչներ են եղել Վարդան Պարսամյանը (1948–1955), Ծատուր Աղայանը (1955–1961, 1972–1980), Աշոտ Հովհաննիսյանը (1961–1972), Ազատ Համբարյանը (1980–2003), Էմմա Կոստանդյանը (2003–2009), 2009 թվականից՝ Ռուբեն Սահակյանը:

Գործունեության առաջին իսկ օրերից բաժնի աշխատակիցները հաջորդաբար հրատարակում են մի քանի հիմնարար աշխատություններ: Մ. Ներսիսյանը հրատարակում է XIX դարի պատմությանը նվիրված մի քանի արժեքավոր աշխատություններ, որոնցում առանձնահատուկ տեղ է գրավում հայ-ռուսական հարաբերությունների թեման: 1944 թ. լույս է տեսել նրա «Սուվորովը և հայ-ռուսական հարաբերությունները. 1770–1790 թթ.» մենագրությունը, որը հեղինակի հայ-ռուսական պատմական կապերին նվիրված առաջին գործերից էր: Նրանում նշվում է XVIII դարի 70-ական թթ. Ղրիմից Հարավային Ռուսաստան հայերի գաղթի իրականացման գործում Ա.Վ. Սուվորովի խաղացած դերի մասին, բացահայտվում են հայ ազատագրական շարժման գործիչների հետ նրա ունեցած կապերը, Ռուսաստանի օգնությամբ հայկական պետականության վերականգնման գործում ռուս զորավարի դրսևորած բարյացակամ վերաբերմունքը և այլն: Հայտնաբերված ու շրջանառության մեջ դրված հարուստ սկզբնաղբյուրների հիման վրա Մ. Ներսիսյանը հրատարակել է հայ-ռուսական հարաբերությունների պատմության երկհատորյակ: Նրա գիտական հետաքրքրությունների մեջ մեծ տեղ է գրավում նաև արևմտահայ ազգային-ազատագրական շարժումների ուսումնասիրությունը: 1946 թ. Մ. Ներսիսյանը պաշտպանել է «Հայ ազատագրական շարժումները Հայաստանում 1860–1880 թթ.» թեմայով դոկտորական ատենախոսություն, որը հրատարակվել է 1955 թ.:

Հայ ազատագրական շարժումների, հայ-ռուսական կապերի պատմության ուսումնասիրության գործում չափազանց մեծ է նաև Ար. Հովհաննիսյանի ներդրումը: Դեռևս 1945 թ. նա ռուսերենով լույս է ընծայել Հովսեփ Էմինին նվիրված մենագրությունը: Բազմավաստակ պատմաբանն արխիվային արժեքավոր վավերագրերի հիման վրա հաջողությամբ լուսաբանել է հայ ազատագրական շարժման կարկառուն ներկայացուցչի կյանքի ու գործունեության կարևոր փուլերը: «Ռուսաստանը և հայ ազատագրական շարժումները XVIII դարի 80-ական թթ.» (1947) ուսումնասիրության մեջ Ար. Հովհաննիսյանը ցույց է տվել ռուսական կողմնորոշման նկատմամբ հայ ժողովրդի հետաքրքրության աճը, ազատագրական շարժման ղեկավարների՝ Ռուսաստանի օգնությամբ Հայաստանն ազատագրելու և նրա հովանու ներքո հայկական պետականությունը վերականգնելու ծրագրերը: Նշված և դրանց հետ կապված մի շարք հիմնախնդիրների ուսումնասիրության գործում առանձնապես գիտական կարևորություն ունի Ար. Հովհաննիսյանի «Անդրկովկասի միացումը Ռուսաստանին և միջազգային հարաբերությունները XIX դարի սկզբին» (1958) մենագրությունը: Հեղինակը լուսաբանում է ռուս-անդրկովկասյան կապերը և երկրամասի միացումը Ռուսաստանին միջազգային հարաբերությունների լայն համապատկերում: Ար. Հովհաննիսյանի ուսումնասիրություններն ուղենիշ են եղել այն հետազոտողների համար, ովքեր զբաղվել են նրա կողմից բարձրացված հարցերի ուսումնասիրությամբ:

Վ. Ռշտունին 1947 թ. հրատարակել է «Գյուղացիական ռեֆորմը Հայաստանում» աշխատությունը, ապա՝ 1900–1917 թթ. Հայաստանում գյուղացիական շարժումներին նվիրված ժողովածու: Նա ուսումնասիրեց նաև XIX դարի հայ հասարակական հոսանքների պատմությունը: Նույն թվականին հրատարակվել է Վ. Պարսամյանի «Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները» ուսումնասիրությունը: Հեղինակն աշխատությունում անդրադարձել է հայ ժողովրդի պատմական ճակատագրում շրջադարձային նշանակություն ունեցող հիմնախնդրին՝ Արևելյան Հայաստանի Ռուսական կայսրությանը միանալու պատմությանը՝ մասնավորապես քննելով և կարևորելով Ա. Գրիբոյեդովի ունեցած դերը:

1950-ական թթ. վերջերին Աշոտ Հովհաննիսյանը հրատարակել է իր մեծածավալ ու ընդգրկուն, երկար տարիների գիտական պրպտումների արդյունքը՝ «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» երկու գրքերը: Նրա այս ուսումնասիրությունն իրավացիորեն դիտվել է ոչ միայն հայ ազատագրական մտքի, այլ՝ ընդհանրապես հայ պատմական գիտության լուրջ նվաճումներից մեկը:

1951 թ. բաժինը համալրվել է նոր ասպիրանտներով՝ Դերենիկ Մուրադյան և Գևորգ Ղազարյան: Հետաքրքրական է այն փաստը, որ Գ. Ղազարյանի համար թեկնածուական ատենախոսության թեմա է ընտրվել «Հայկական կոտորածները Արևմտյան Հայաստանում XIX դարի 90-ական թվականներին»: Գիտական ղեկավարն է եղել Վ. Պարսամյանը:

1952 թ. բաժնի գիտահետազոտական թեմատիկան ավելի ընդգրկուն է դառնում: Հետազոտությունների հիմնական ուղղություններին ավելանում է պատմագիտության զարգացումը Հայաստանում XIX–XX դարերում թեման:

Նոր դարի պատմության բաժնում մեծ աշխատանք է կատարվել հայ-ռուսական կապերին նվիրված ժողովածուների ստեղծման ուղղությամբ: 1953 թ. Վ. Պարսամյանի խմբագրությամբ լույս է տեսել XVII դարի հայ-ռուսական հարաբերություններին նվիրված արխիվային փաստաթղթերի ժողովածուն (կազմողներ՝ Վ. Պարսամյան, Վ. Ոսկանյան, Ս. Տեր-Ավակիմովա):

Ա.Գ. Հովհաննիսյանի ղեկավարությամբ գիտական ասպարեզ մտած երիտասարդ պատմաբանները 1960-ական թվականների կեսերից հրատարակել են արժեքավոր ուսումնասիրություններ, որոնք թեմայի ընտրության և ուսումնասիրման որակով նորություն էին պատմագիտության մեջ: Այդ տարիներին լույս է տեսել Ռաֆիկ Հովհաննիսյանի՝ «Պաշտպան հայրենյաց» խմբակին, Հայկ Ղազարյանի՝ Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքին ու քաղաքական կացությանը, Վահե Երկանյանի՝ հայկական դպրոցի պատմությանը, Էմմա Կոստանոյանի՝ Գարեգին Սրվանձտյանի կյանքին ու գործունեությանը նվիրված հետազոտությունները: Հայ-ռուսական կապերի ուսումնասիրության բնագավառում նոր խոսք է ասել Վալտեր Դիլոյանը: Վլադիմիր Ղազարյանն առանձին գրքով ընդհանրացրել է Խաչատուր Աբովյանի կյանքին ու գործունեությանը նվիրված երկար տարիների պրպտումների արդյունքը, Նորայր Մարուխանյանը քննության առավ Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման պատմագրության հարցերը: 1957 թ. բաժնում աշխատանքի անցած Ազատ Համբարյանին հանձնարարվել է ուսումնասիրել «Արևմտահայ դեմոկրատական հոսանքը 1850–1860-ական թթ.», Դ. Մուրադյանին՝ «Բանվորական շարժումը Հայաստանում 1907–1917 թթ.», Յու. Մռավյանին՝ «Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը 19-րդ դարի վեջին քառորդին» թեմաները:

Հետագա տարիներին Ա. Համբարյանը ընդլայնել է իր հետազոտությունների շրջանակը՝ զբաղվել Արևելյան Հայաստանում կապիտալիստական հարաբերությունների ուսումնասիրությամբ, անդրադարձել կալվածատերերի ու ցարական կառավարության գաղութային քաղաքականության դեմ գյուղացիների ծավալած պայքարի խնդիրներին: 1960-ական թվականներին ուսումնասիրելով

Արևմտյան Հայաստանի ագրարային հարաբերությունների պատմության հարցերը՝ պատմաբանը ցույց է տվել օսմանյան քաղաքականության բացասական ազդեցությունն Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման գործում, հաշտությամբ բնութագրել է Արևմտյան Հայաստանի ագրարային հարաբերությունների առանձնահատկություններն ու ագրարային հարցի լուծման ուղիները: Ա. Համբարյանը հրատարակել է 1898–1908 թթ. Արևմտյան Հայաստանի ազատագրական շարժումներին նվիրված մենագրություն, որտեղ բացահայտել է հայ հասարակական-քաղաքական շրջանների դիրքորոշումը, ազատագրական շարժումները, ինքնապաշտպանական մարտերը, ընդիմադիր ուժերի քայլերը և այլ հարցերը:

Անդրկովկասի պատմությանը նվիրված աշխատություններ է հրատարակել Գալուստ Գալոյանը, որոնցում անդրադարձ է ունեցել նաև հայ ազատագրական պայքարի պատմության հարցերին: Պատմաբանը նոր տեսակետներ է զարգացնում հայերի ռուսական կողմնորոշման և հայկական հարցի ծագման վերաբերյալ: Քննադատելով երկրամասում ցարիզմի վարած գաղութային քաղաքականությունը՝ նա միաժամանակ Անդրկովկասի միացումը Ռուսաստանին երկու կողմերի համար առաջադիմական է համարել:

Դ. Մուրադյանը և Վ. Բարխուդարյանը հանդես են եկել ցարիզմի դեմ հայ ժողովրդի մղած պայքարի լուսաբանմամբ: Պատմաբանները գիտական հասարակայնությանը ներկայացրել են Արևելյան Հայաստանի հեղափոխական շարժումների համակողմանի պատմությունը՝ լրացնելով տվյալ հիմնահարցի կապակցությամբ պատմագիտական գրականության մեջ առկա բացթողումները:

Բաժնի գիտաշխատողներն ուսումնասիրել են Արևելյան Հայաստանի գյուղացիական շարժումների ու արդյունագործության հիմնահարցերը: XIX դարի 80–90-ական թվականների գյուղացիական շարժումներին է նվիրված Վաչե Հովակիմյանի, իսկ XIX դարի երկրորդ կեսի արդյունագործությանը՝ Գոհար Առաքելյանի մենագրությունները: Սամվել Ալեքսանյանի աշխատությունում ներկայացվում են Արևելյան Հայաստանի նոր շրջանի ագրարային հարաբերությունների հետազոտության արդյունքների պատմաքննական վերլուծությունը ու ընդհանրացումը: Արարատ Հակոբյանը հետազոտել է Կարսի մարզի գյուղացիության պատմությունը: Ծատուր Աղայանն ուսումնասիրել է հայ ազատագրական շարժումներն, իր ստվարածավալ մենագրության մեջ շարադրել է այդ համապարփակ հիմնահարցի կարևոր կողմերը: Հայկազ Պողոսյանը Սասունի պատմությանը նվիրված գրքում հանգամանորեն ներկայացրել է ֆիդայական շարժումը: Նա ցույց է տվել շարժման երևան գալու նախադրյալները, կարևորել նրա նշանակությունը: Պատմաբանն անդրադարձել է նաև 1894 թ. Սասունի ապստամբությանը: Անդրադարձներ են կատարվել նաև 1890-ական թթ. հայկական կոտորածներին, 1904 և 1915 թվականների հերոսամարտերին: Հ. Պողոսյանը հրատարակել է Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք Մկրտիչ Խրիմյանի հանձնարարությամբ 1872–1873 թթ. Բարձր Հայք և Վասպուրական Երեմիա Տևկանցի ճանապարհորդության հուշագրությունը, ինչպես նաև Երեմիայի կրտսեր եղբայր Արիստակես Տևկանցի երկը՝ Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանի հանձնարարությամբ 1878 թ. Բարձր Հայքի տարածքով դեպի Մշո դաշտ և Բաղեշ կատարած ճանապարհորդության վերաբերյալ: Բաժնի աշխատակից Խիկար Բարսեղյանն ուսումնասիրել է Հայաստանում մարքսիզմի տարածման պատմությունը, որին է նվիրել իր ստվարածավալ երկհատորյակը: Ա. Համբարյանի, Գ. Առաքելյանի, Գասպար Կիրակոսյանի և Սամվել Մկրտչյանի ջանքերով հրատարակվել է ռուսական կառավարության կողմից 1917 թ. Ռուսաստանում կատարված մարդահամարի նյութերը:

Նկատելի աշխատանքներ են կատարվել նաև Առաջին համաշխարհային պատերազմի, այդ տարիներին հայության դրության ուսումնասիրության ուղղությամբ: Բաժնի աշխատակիցներ Եր-

վանդ Սարգսյանը, Ջոն Կիրակոսյանը, Մակիչ Արզումանյանը, Արամայիս Մնացականյանը և ուրիշներ հրատարակել են մի շարք արժեքավոր մենագրություններ: Նրանցում փաստական հարուստ նյութերի հիման վրա ցույց է տրվել աշխարհամարտի նախօրյակին միջազգային դիվանագիտության ոլորտներում Հայկական հարցի արծարծվելու հանգամանքները, մեծ տերությունների դիրքորոշումը, Գերմանիայի և Թուրքիայի մերձեցումը և նվաճողական ձգտումները: Առաջին համաշխարհային պատերազմի Կովկասյան (ռուս-թուրքական) ռազմաճակատում ծավալված մարտական գործողությունները, հայ կամավորական շարժումը լուսաբանել է ռազմական արվեստի տեսաբան և պատմաբան Աշոտ Հարությունյանը:

Խրուչչովյան «ձնհալի» տարիներին բաժնի աշխատակիցները հնարավորություն են ստանում զբաղվել նախկինում «փակ» համարվող թեմաներով: Դրանք հիմնականում ներառում են Արևմտյան Հայաստանում ծավալված ազգային-ազատագրական շարժումները, Օսմանյան կայսրությունում 1890-ական թթ. հայերի զանգվածային կոտորածները, 1915 թ. ցեղասպանությունը, ինքնապաշտպանական մարտերը և այլն: Այս միտումը առանձնապես դրսևորվեց, երբ բաժինը գլխավորեց ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ. Աշոտ Գարեգինի Հովհաննիսյանը:

1960-ական թթ. բաժնի աշխատակիցների թիվը տատանվել է 10-ից մինչև 14-ը: Բաժնում աշխատել են Ա.Գ. Հովհաննիսյանը, Ն. Կարապետյանը, Հ. Վարդանյանը, Խ. Բարսեղյանը, Ս. Տեր-Ավակիմովան, Դ. Մուրադյանը, Ա. Համբարյանը, Հ. Ղազարյանը, Յու. Մռավյանը, Վ. Դիլոյանը, Է. Կոստանդյանը, Ռ. Հովհաննիսյանը, Վ. Ղազարյանը, Վ. Երկանյանը:

Բաժնի գիտաշխատողների արգասաբեր աշխատանքի արդյունքն է 1964 և 1967 թթ. հրատարակված հայ-ռուսական հարաբերություններին նվիրված փաստաթղթերի ժողովածուի II հատորի առաջին և երկրորդ մասերը: 1977–1978 թթ. հրատարակության են հանձնվել «Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին» փաստաթղթերի և նյութերի ժողովածուի արժեքավոր հատորները:

Հայաստանի անկախության հռչակումից հետո Նոր պատմության բաժնի գիտաշխատողները գիտահետազոտական տարբեր թեմատիկ խմբերի կազմում շարունակում են իրենց ուսումնասիրությունները: Բաժնի վարիչ Ա. Համբարյանը զգալի աշխատանք է կատարել ազգային-ազատագրական շարժումների ուսումնասիրման և լուսաբանման ուղղությամբ: 1999 թ. լույս է տեսել նրա «Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1898–1908)» արժեքավոր մենագրությունը: Հեղինակը բազմաթիվ նորահայտ արխիվային վավերագրերի հիման վրա բացահայտել է Արևմտյան Հայաստանում XX-րդ դարի սկզբին սուլթանական կառավարության վարած հայահալած քաղաքականությունը. որում բնութագրվում է հայ հասարակական-քաղաքական շրջանների դիրքորոշումը, նորովի լուսաբանվում են արևմտահայության ազատագրական շարժումները, ինքնապաշտպանական մարտերը և այլն:

Լուրջ նվաճումներ են արձանագրվել կուսակցությունների պատմության ուսումնասիրության բնագավառում: 2003 թ. լույս է տեսել «Հայ ազգային և Հայաստանի ու Անդրկովկասի սոցիալիստական կուսակցությունների պատմության ակնարկներ (1885–1914)» գիտական հոդվածների ժողովածուն, որը նվիրված է Արմենական, Սոցիալ-դեմոկրատ հնչակյան, Հայ հեղափոխական դաշնակցություն, Վերակազմյալ հնչակյան, Հայ սահմանադրական ռամկավար, Սոցիալիստ հեղափոխականների, Սպեցիֆիկների կուսակցությունների, ՌՄԴ(Բ)Կ Անդրկովկասի և Հայաստանի կազմակերպությունների ստեղծման ու գործունեության պատմությանը:

Գևորգ Խուդինյանը հրատարակել է «ՀՅ Դաշնակցության քննական պատմություն (ակունքներից մինչև 1895 թվականի վերջերը)» արժեքավոր մենագրությունը: Այն ՀՅԴ գաղափարական ակունքների, ձևավորման գործընթացի, գործունեության վաղ շրջանի պատմաքննական ուսումնասիր-

րության հաջողված փորձ է: Մուրեն Սարգսյանը հրատարակել է «Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցություն (1908–1921)» մենագրությունը, որում շարադրված է կուսակցության ձևավորման գործընթացը, բացահայտված են նրա սոցիալական արմատները, ներկայացված են նշանավոր գործիչները: Գեղամ Հովհաննիսյանը հրատարակում է «Հնչակյան կուսակցության պատմություն (1887–1915)» մենագրությունը: Այս աշխատություններում ցույց է տրված կուսակցությունների տեղն ու դերը հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարում:

Բաժնի վարիչ Է. Կոստանոյանի աշխատությունը նվիրված է 19-րդ դարի երկրորդ կեսի հայ հասարակական-քաղաքական, հոգևոր գործիչ, Ամենայն հայոց Մկրտիչ Ա Վանեցու (Մկրտիչ Խրիմյան) գործունեության քննությանը: Է. Կոստանոյանն ուսումնասիրել է նաև 19-րդ դարի 80-ական թվականների արևմտահայ մշակութային ընկերությունների ստեղծման, դպրոցական գործի կազմակերպման և հասարակական-քաղաքական կյանքի ու հայրուկային կամ ֆիդայական շարժման առաջին քայլերի պատմությունը: Է. Կոստանոյանի Մաղաքիա արք. Օրմանյանի կյանքի ու գործունեության պատմությունը նվիրված աշխատությունում վերլուծվել են մեծ գործչի հայրենասիրական գաղափարներով տոգորված բանախոսությունները, պատմագիտական և մանկավարժական հայացքները, ներկայացվել է Օրմանյանի պատրիարքական գործունեությունը:

Մուրեն Սարգսյանն աշխատություն հրատարակեց նվիրված՝ XIX դարի 80-ական թթ. հայ ազատագրական պայքարի նվիրյալ Մկրտիչ Փորթուգայանի կյանքի, հասարակական-քաղաքական գործունեությանը և նրա «հոգեգավակ», հայ քաղաքական մամուլի առաջնեկ «Արմենիա» պարբերականի ազգային-ազատագրական գաղափարախոսության մշակման ու այն ժողովրդի սեփականությունը դարձնելու գործում ունեցած դերակատարությանը:

Բաժնի ուսումնասիրությունների ոլորտում էր նաև Կիլիկիան: Կիլիկիահայության նոր շրջանի պատմության ուսումնասիրությամբ է զբաղվել Ռուբեն Գասպարյանը՝ հրատարակելով հետազոտություններ, որոնցում լուսաբանված են երիտթուրքական իշխանությունների քաղաքականությունը և 1909 թ. հայկական կոտորածներն ու կիլիկիահայության ինքնապաշտպանական մարտերը:

Արևմտյան Հայաստանի ռազմաքաղաքական և վարչատնտեսական վիճակին, 1915 թ. արևմտահայության ցեղասպանությանը և ինքնապաշտպանական մարտերին է նվիրված Ռ. Սահակյանի արժեքավոր մենագրությունը: Նա հրատարակել է նշանավոր մտավորական և հասարակական գործիչ Վ. Տերոյանի անտիպ գործերը, Վանի նահանգապետության շրջանում հայկական ոստիկանության գործունեությունը լուսաբանող փաստաթղթեր և նյութեր: Ռ. Գասպարյանը և Ռ. Սահակյանը հրատարակել են Ա.-Դոյի (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան) «Ռուսական ցարերը և հայկական հարցը» անտիպ աշխատությունը:

Արմենուհի Ղամբարյանն ուսումնասիրել է 1912–1914 թթ. Հայկական հարցում Մեծ Բրիտանիայի քաղաքականությունը: Հեղինակի հանգամանալից վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Արևմտյան Հայաստանի համար նախատեսված բարենորոգումների խնդրի վերաբացումը, քննարկումները, և, ի վերջո, բացասական լուծումները որոշակիորեն պայմանավորված էին նաև Հայկական հարցում Մեծ Բրիտանիայի որդեգրած քաղաքականությամբ:

Բաժինը զգալի աշխատանք է կատարել նաև գիտաքաղաքական կարևորագույն նշանակություն ունեցող Հայաստանի նահանգների վարչատարածքային, ժողովրդագրական գործընթացների ուսումնասիրության բնագավառում: Այդ գործի նախաձեռնողներից էր Աշոտ Մելքոնյանը: Նրա ղեկավարությամբ ինստիտուտում սկսում է գործել թեմատիկ խումբ: Ա. Մելքոնյանը ուսումնասիրություններ է կատարել Էրզրումի նահանգի և Ջավախքի մասին, հրատարակում է «Էրզրում. Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը 19-րդ դարի առաջին երեսնամյակին», «Ջավախք: Պատմության

ուրվագծեր» և «Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին» արժեքավոր մենագրությունները: Հրատարակվում է նաև Ա. Մելքոնյանի «Հայաստանի պատմության և ժողովրդագրության հիմնահարցեր» ժողովածուն, որը հիմնականում ընդգրկում է Հայաստանի, մասնավորապես Արևմտյան Հայաստանի, Ջավախքի և Լոռու ժողովրդագրության հիմնահարցերին վերաբերող հեղինակի հոդվածների ընտրանին: Ա. Մելքոնյանը աշխատություն է հրատարակում 19-րդ դարի և 20-րդ դարի սկզբի Ախալցխայի և Ախալքալաքի հայկական դպրոցների ստեղծման ու գործունեության պատմության մասին: Ներառելով Հայոց ցեղասպանության թեման Ա. Մելքոնյանը ընդլայնում է գիտահետազոտական ուսումնասիրությունների առանցքը: Հրատարակվում են նրա «Հայոց պատմության դասերն ու պատգամները» և «Ցեղասպանություն և հայրենագրկում» ժողովածուները, որոնցում տեղ են գտել հայաստանյան և սփյուռքյան մամուլում հեղինակի տպագրած հոդվածներն ու հարցազրույցները հայագիտության, մասնավորապես հայոց պատմության, ինչպես և հայ հասարակության առջև ծառայած համագրային այլ խնդիրների (Արևմտյան Հայաստան, Արցախ, Ջավախք, պետականության, հայոց լեզվի, ժողովրդագրության հարցեր և այլն) շուրջ: Բազմաշերտ նյութերի մեջ գերակշռում է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու հատուցման թեման: Հատուկ ուշադրության է արժանանում թուրք-ադրբեջանական պատմագրության կողմից հայոց պատմության հարցերի խեղաթյուրման խնդիրը:

Հակոբ Մուրադյանը հրատարակում է «Կարսի նահանգի վարչաժողովրդագրական նկարագիրը XIX-րդ դարի առաջին երեսնամյակին» մենագրությունը, որում ներկայացվում է Կարսի նահանգի վարչատարածքային բաժանումը, գավառների ու բնակավայրերի տեղաբաշխումը և տեղագրությունը, ժողովրդագրական տեղաշարժերը և դրանց սոցիալ-քաղաքական նախադրյալները: Հ. Մուրադյանը հրատարակության է պատրաստել նշանավոր հոգևորական Երեմիա արքեպիսկոպոս Տեր-Սարգսյանի (Տեկանց) անտիպ տոհմային հիշատակարանի 8-րդ գիրքը:

Մեբաստիայի նահանգի XIX դարի վերջի և XX դարի սկզբի վարչաժողովրդագրական վիճակին է նվիրված Արման Սահակյանի մենագրությունը: Շիրակ գավառի արևելյան հատվածի XIX-րդ դարի առաջին կեսի վարչական բաժանումների, բնակավայրերի ու ազգաբնակչության տեղաբաշխման, Ռուսական կայսրության կողմից վարվող ժողովրդագրական քաղաքականության, էթնիկ տեղաշարժերի, դրանց պատճառների և դրսևորման առանձնահատկությունների, ինչպես նաև մի շարք այլ հիմնահարցերի պարզաբանման է նվիրված Արմեն Հայրապետյանի մենագրությունը: Նրա ջանքերով հրատարակվեց «Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIX դ. – XX դ. սկիզբ)» փաստաթղթերի և նյութերի ժողովածուն, որն արխիվային վիճակագրական փաստաթղթերի հարուստ հավաքածու է: Գոհար Առաքելյանի աշխատությունը նվիրված է հայ ժողովրդի մի ստվար հատվածի մշտական հայրենիք-բնօրրանը հանդիսացող Գանձակ-Ելիզավետպոլի նահանգի բնակչության բազմաբնույթ հիմնահարցերի ուսումնասիրությանը 19-րդ դարում:

Հասմիկ Ամիրջանյանի մենագրությունները նվիրված են Գուգարաց աշխարհի Տաշիր և Ձորփոր գավառների տարածքում ձևավորված՝ Արևելյան Հայաստանի մի ինքնատիպ վարչական և ազգագրական ամբողջության՝ Լոռու գավառի XVIII դարի վերջի – XIX դարի պատմաժողովրդագրական պատմությանը:

Ինչպես խորհրդային տարիներին, այնպես էլ Հայաստանի անկախության հռչակումից հետո բաժնի աշխատակիցները ակտիվ մասնակցություն են ունեցել «Հայոց պատմության» դպրոցական և բուհական դասագրքերի ու ձեռնարկների պատրաստման գործում: Բաժնի առաջատար գիտաշխատողները համահեղինակել են ինստիտուտի կողմից հրատարակված «Հայոց պատմության» ակա-

դեմիական բազմահատորյակի երրորդ հատորի երկու գրքերը, որոնցում արտացոլված է XVII-րդ դարի երկրորդ կեսից մինչև 1918 թ. ընդգրկող պատմաաշխատանքները:

Բաժնի գիտաշխատողներն մասնակցել են ինչպես հանրապետական, այնպես էլ միջազգային բազմաթիվ գիտաժողովների, ինստիտուտի մյուս աշխատակիցների հետ ակտիվ մասնակցություն են ունեցել ՀՀ պաշտպանության նախարարությանը կից գործող Հասարակական խորհրդի կողմից Արցախի Հանրապետության Պաշտպանության Բանակի տարբեր զորամասերում կազմակերպվող միջոցառումներին, հանդես եկել դասախոսություններով: Այցելությունները լուսաբանվել են ոչ միայն ինստիտուտի կայքէջում, այլև «Հայ զինվոր» շաբաթաթերթում:

Բաժնի գիտական աշխատանքներն իրականացնում են. բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող՝ պ.գ.դ. Ռ. Սահակյան, գլխավոր գիտաշխատող՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ. Ա. Մելքոնյան, առաջատար գիտաշխատողներ՝ պ.գ.դ. Գ. Խուդինյան, պ.գ.դ. Ս. Սարգսյան, ավագ գիտաշխատողներ՝ պ.գ.թ., դոցենտ Հ. Մուրադյան, պ.գ.թ. Գ. Հովհաննիսյան, պ.գ.թ. Ա. Հայրապետյան, գիտաշխատողներ՝ պ.գ.թ. Հ. Ամիրջանյան, պ.գ.թ. Մ. Հարությունյան, կրտսեր գիտաշխատողներ՝ պ.գ.թ. Ն. Գինոսյան, Ն. Ադամյան, Լ. Քոսյան, ավագ լաբորանտ՝ Մ. Երանոսյան, ասպիրանտ՝ Տ. Հարությունյան: